ՀԱՅԵՐԵՆԻ *ԵՐԳ* ՎԵՐՋՆԱԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.54503/978-9939-970-23-3-102

Խաչատրյան Վալենտին
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ավագ գիտաշխատող.
valentin.khachatryan81@gmail.com
ORCID:0009-0004-2647-0673

Բանալի բառեր. երգ, վերջնաբաղադրիչ, կազմություն, հիմք, իմաստագործառական առանձնահատկություն, բառիմաստ, բառարան, բառամիավոր։

Նախաբան

Յուրաքանչյուր լեզվի բառապաշարի համակարգային ուսումնասիրությունը ենթադրում է առանձին բառամիավորների և դրանցով բաղադրված կազմությունների համակողմանի քննություն։ Այս համատեքստում էլ կարևորվում է սույն հոդվածը, որը նվիրված է *երգ* վերջնաբաղադրիչով կազմությունների իմաստագործառական առանձնահատկությունների բացահայտմանը։

Ըստ Է. Աղայանի բացատրական բառարանի[1]՝ *երգ* բառն ունի հետևյալ նշանակությունները. 1. բանաստեղծական-երաժշտական ստեղծագործություն՝ երգելու համար, ձայնագրված ոտանավոր, 2. փոքրիկ երաժշտական ստեղծագործություն, 3. քնարական բա-

[1] **Աղայան Է.**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 1-2, Ե., 1976 (այսուհետև՝ ԱՀԲԲ)։

նաստեղծություն, 4. դյուցազներգություն՝ վիպերգի յուրաքանչյուր հատվածը, դրվագ, 5. (գրկն.) որևէ մեկի կամ որևէ իրադարձության մասին գրված ընդարձակ չափածո կամ արձակ ստեղծագործություն, 6. փխբ. առհասարակ՝ չափական ստեղծագործություն, 7. փխբ. նվագ, 8. փխբ. թռչունների ճռվողյուն, 9. փխբ. բնական երևույթների և տարերքի մեղմ ու հաճելի տևական ձայն, 10. փխբ. փառաբանական բանավոր կամ գրավոր խոսք (չափածո կամ արձակ), 11. փխբ. կրկնված՝ ձանձրացրած բան (ԱՀԲԲ, հ. 1, էջ 338)։

Այսպիսով՝ *երգ* վերջնաբաղադրիչով կազմություններից յուրաքանչյուրն առնչվում է վերոնշյալ իմաստներից որևէ մեկին, ինչպես կփաստվի ստորև։

Գ. Մխիթարյանը «Հայերենի երաժշտական տերմինները 19-20-րդ դարերում» խորագրով ատենախոսության շրջանակում անդրադարձել է մոտ մեկ տասնյակ համապատասխան բառամիավորների՝ քննելով դրանց իմաստային նեղացումն[2] ու անհոդակապ կազմությունը[3]։

Քանի որ կարելի է գրեթե ամեն իրողության ու երևույթի մասին երգ հյուսել, տարբեր տեսանկյուններից բնութագրել տվյալ հասկացությունը, ինչպես նաև բնության կամ կենդանական աշխարհի ձայները փոխաբերաբար *երգ* բառով անվանել, հենց այդ հանգամանքներով էլ պայմանավորված է նշված արմատական բաղադրիչով կազմությունների առատությունը, որը հավաստվում է բառարանային տվյալներով։

Երգ վերջնաբաղադրիչով բառերի վերհանում, իմաստագործառական քննություն

[2] Տե՛ս **Մխիթարյան Գ.**, *Հայերենի երաժշտական տերմինները 19-20-րդ դարերում* (ատենախոսություն), Ե., 2000, էջ 86։

[3] Նշվ. աշխ., էջ 101։

Խնդրո առարկա բառերը մեծ մասամբ ամրագրված են ԱՀԲԲ-ում (շուրջ 78 բառ՝ չհաշված միևնույն բառի հնչյունական տարբերակները)։ Դրանք են. *աղոթաերգ // աղոթերգ, այգերգ, աշներգ, առանձներգ, ասերգ, բարներգ, գիշերերգ, գյուղերգ, գովերգ, գութաներգ, գուսաներգ, դաշներգ, դերերգ, դյուցազներգ, եղերգ // եղերերգ, երկերգ, զանգերգ, զվարճերգ*[4], *գուգերգ, թաղերգ, թատերգ // թատրերգ // թատերերգ, թռչնահամերգ, թվերգ, ժամերգ, խաղերգ, խմբերգ, խորհրդերգ, ծաղրերգ, ծիսերգ, կանչերգ, կատակերգ, կատվահամերգ, կենացերգ, կրկներգ, հագներգ, հաղթերգ, համերգ, հանգերգ, հարսներգ, հեգներգ, հեշտերգ, հիմներգ, հովվերգ, հոտերգ, ձոներգ, մահերգ, մարտերգ, մենահամերգ, մեներգ, նախերգ, ողբերգ, չվերգ, պաշտոներգ, պարերգ, ջրերգ, ռազմերգ, սաղմոսաերգ, սայլերգ, սգերգ, սիրերգ, սրնգերգ, վերջերգ, վիպերգ, տաղերգ, տարփերգ, տներգ, տոներգ, ցայգերգ, ցավերգ, ցնծերգ, ուրախերգ, քայլերգ, քառերգ, քարերգ, քնարերգ, քներգ, օրհներգ, օրորերգ // օրրերգ*։

Քննվող բառացանկում առանձնանում են *թռչնահամերգ*, *մենահամերգ* և *կատվահամերգ* բառերը, որոնց սերող հիմքը *համերգ* նախածանցավոր բառն է, մինչդեռ մյուս բոլոր բառամիավորներում *երգ* արմատն անմիջականորեն է գործում որպես բաղադրող հիմք։

Ինչպես *համերգ* բառը, այնպես էլ քննվող միավորներից շատերը հիմք են ծառայել նորանոր կազմությունների համար, որոնց բազում օրինակներ ևս արձանագրված են ԱՀԲԲ-ում, սակայն մեր բուն նպատակը սույն հոդվածում միայն *երգ* վերջնաբաղադրիչով բառերի իմաստագործառական քննությունն է։

Բացի *համերգ*, *նախերգ* բառերից, որոնք նախածանցավոր են, մնացած բոլոր օրինակները կազմվել են բառաբարդմամբ։

[4] *Զվարճերգ* բառն ԱՀԲԲ-ում ոչ թե տրված է առանձին գլխաբառով, այլ առկա է *ուրախերգ* բառի բացատրության մեջ։

Վերոհիշյալ բառացանկից զատ՝ առանձնակի ուշադրության են արժանի հատկապես այն բառերը, որոնք *երգ*-ով բաղադրված ուրույն հիմքեր ունեն. *գարուներգակ*, *խազերգություն*, *կաքավերգություն*, *վերերգել*, *փառերգություն* և այլն (ԱՀԲԲ)։ Ակնհայտ է, որ նշված բառամիավորների հիմքերը տեսականորեն կարող են նույնպես ինքնուրույն գործածությամբ բառ լինել։ Հաջորդիվ պարզվում է, որ իրապես այլ բառարաններում դրանք, որպես բառույթներ, բառարանագրված են։ Այսպես. «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում»[5] արձանագրվել են՝ *կաքավերգ*, *վերերգ* «կրկներգ», Ա. Սուքիասյանի «Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարանում»[6]՝ *գարուներգ*, Գ. Ճերեճյանի և այլոց «Հայոց լեզուի նոր բառարանում»[7]՝ *խազերգ* «խազերով՝ ձայնանիշ/ն/երով՝ նոթաներով երգուած երաժշտական կտոր», «Նոր բառեր» բառարանաշարքի Ա պրակում՝ *փառերգ* «փառաբանող երգ»[8]։

Գ. Ջահուկյանի հանգաբառարանը պարունակում է *երգ* վերջնաբաղադրիչով 31 բառամիավոր, այդ թվում և մեկ բառի հնչատարբերակներ՝ *եղերերգ* // *եղերգ*[9], սակայն ԱՀԲԲ-ում արձանագրված բառացանկից դուրս որևէ միավոր չկա։

ԺՀԼԲԲ–ում, բացի վերը հիշատակված օրինակներից, առկա է նաև *տխրերգ* բառը։ Ուշագրավ է, որ եթե ԱՀԲԲ-ում *զվարճերգ* հո-

---

[5] *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հ. 1-4, Ե., 1969-1980 (այսուհետև՝ ԺՀԼԲԲ)։

[6] **Սուքիասյան Ա.**, **Սուքիասյան Ք.**, *Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան*, Ե., 2002։

[7] **Ճերեճեան Արք. Գ.**, **Տօնիկեան Փ.** և **Տէր Խաչատուրեան Ա.**, *Հայոց լեզուի նոր բառարան*, Պէյրութ, 1992 (այսուհետև՝ ԳՃԲ)։

[8] Տե՛ս Նոր բառեր, Ա պրակ, Ե., 1976, էջ 37-38։

[9] Տե՛ս **Ջահուկյան Գ.**, *Հայոց լեզվի հանգաբառարան*, Ե., 1976, էջ 37-38։

մանիշը տրված է միայն *ուրախերգ* բառի բացատրության մեջ, ապա ԺՀԼԲԲ-ում և արևմտահայերենի բառարաններում[10] այն ունի առանձին գլխաբառային գրանցում: Հատկանշական է, որ այն առավել հատուկ է արևմտահայերենին՝ ի տարբերություն *ուրախերգ*-ի, որն իր հերթին բնորոշ է հատկապես արևելահայերենին:

Երգ վերջնաբաղադրիչով վերոհիշյալ կազմությունների շարքը համալրվում է այլ օրինակներով ևս: Այսպես. Նոր հայկազյան բառարանում[11] *կանխերգ*-ը վկայված է որպես ածական «կանխաւ երգեալ ի սաղմոսի կամ ճառեալ ի սուրբ գիրս», սակայն վերջինս նաև տրված է ԳԾԲ-ում՝ որպես *նախանուագ* բառի բացատրություն, բնականաբար և գոյականական արժեքով. «3. փխբ. նախերգ/անք/, կանխանուագ, կանխերգ»: Բառարանային այլ աղբյուրների քննությունը վեր է հանում նոր միավորներ. Հ. Աճառյանի «Հայերէն արմատական բառարանի»[12]՝ *երգ* գլխաբառի հոդվածում առկա է *հակերգ* բառը, Գ. Մելիք-Վրթանեսյանի և Մ. Տոնյանի «Երաժշտական բացատրական բառարանում»[13]՝ *մանրերգ* «ծավալի համեմատական փոքրությամբ, յուրօրինակ արտահայտչականությամբ երգ», *փոխերգ* «փոխնիփոխ երգեցողություն», Մալխասյանցի բացատրական բառարանում[14]՝ *եռերգ* «եռանուագ», Արևակ-ում[15]՝ *թախծերգ* (Վ. Թոթովենց), *պարսավերգ*

---

[10] Տե՛ս **Սաքապետոյան Ռ.**, *Արևմտահայերէն-արևելահայերէն նոր բառարան*, Ե., 2011 (այսուհետև՝ ՌՍԲ), **Ճէրէճեան Արք. Գ., Տօնիկեան Փ.** և **Տէր Խաչատուրեան Ա.**, *Հայոց լեզուի նոր բառարան*, Պէյրութ, 1992 (այսուհետև՝ ԳԾԲ):

[11] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ.1-2, Վենետիկ, 1836-37:

[12] **Աճառյան Հ.**, Հայերէն արմատական բառարան, հ. 1-4, Ե.,1971-1979:

[13] **Մելիք-Վրթանեսյան Կ.**, **Տոնյան Մ.**, *Երաժշտական բացատրական բառարան*, Ե., 1989 (այսուհետև՝ ԵԲԲ):

[14] Արևելահայերենի ազգային կորպուս
http://webcorpora.net/EANC/search/?interface_language=am

[15] *Արևելահայերենի ազգային կորպուս.*
http://webcorpora.net/EANC/search/?interface_language=am

(Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2), Դ. Գյուրջինյանի քերականական բառարան-տեղեկատուի[16] ցանկում՝ *փնջերգ։*

Խնդրո առարկա մի շարք միավորներ, որպես նոր ժամանակաշրջանի բառակերտումներ, արձանագրված են վերջին տասնամյակներում տպագրված՝ նոր բառերի, նորաբանությունների և ուղղագրական բառարաններում։ Դրանց մեջ առկա են նաև դիպվածային բառեր, որոնք հիմնականում վերցված են գեղարվեստական գրականությունից։ Այսպես. Փ. Մեյթիխանյանի «Նոր բառերի բացատրական բառարանում»[17] արձանագրվել են՝ *ադամանդ-երգ* «իբր՝ ադամանդե՝ հղկված երգ», *աղավնաերգ, ծղրիդաերգ*, Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանում»[18]՝ *ավանդերգ* (արվ.) «ավանդական վիպերգ, բալլադ», *հիմնօրհներգ* «օրհներգություն, ներբող (որևէ շինության հիմքի, հիմնադրման ևն)», *հրաշաերգ* «հրաշալի երգ, հրաշք երգ», *ձաղկերգ* «պախարակող՝ խարազանող՝ պարսավող ոճ, ստեղծագործություն, հոդված ևն», *գալա-համերգ* «մեծ համերգ», *պոպ-երգ* (երժշտ.) «էստրադային երաժշտության ժանր», *ջրաերգ* «1. ջրի խոխոջուն, 2. ջրին նվիրված երգ», *տոնահամերգ* «տոնական համերգ»։ Համեմատաբար մեծ թիվ են կազմում «Նոր բառեր» բառարանաշարքի պրակներում[19] գրառվածները. *ահերգ* (վերնագիր) «ահի՝ վախի զգացումին նվիրված երգ» (Գ), *գիներգ* «խրախճանքի երգ» (Դ), *թռչներգ* «թռչունների երգ» (Զ), *կալերգ* «կալի երգ» (Զ), *հաշվերգ* «(գրկն.) մանկական բանահյուսության ժանր» (Բ), *հավքաերգ* (բնստ.)

---

[16] Տե՛ս **Գյուրջինյան Դ.**, *Անուն խոսքի մասերի թվի կարգը հայերենում. քերականական բառարան-տեղեկատու*, Ե., 2007, էջ 128։

[17] **Մեյթիխանյան Փ.**, Նոր բառերի բացատրական բառարան, Ե., 1996։

[18] **Էլոյան Ս.**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., 2002 (այսուհետև՝ ՍԷՆԲ)։

[19] *Նոր բառեր*, Ա- Թ պրակներ, Ե., 2015-2025։ Յուրաքանչյուր օրինակի կողքին նշվում է համապատասխան պրակը։

«հավքերի երգ» (Զ), *հնչերգ* «հնչող երգ» (Ե), *մեղվաերգ* (Ա), *ողջերգ* «ձոներգ» (Բ), *որսերգ* «որսի՝ որսի մասին՝ որսորդության ժամանակ երգվող երգ» (Գ), *պարգերգ* «պարզ, մատչելի երգ» (Ա), *վրեժերգ* «վրեժի երգ» (Դ), *փառերգ* «փառաբանող երգ» (Ա)։

Հավելյալ մի քանի բառամիավորներ ամրագրված են Ա. Սուքիասյանի հոմանիշների բացատրական բառարանում[20], ինչպես՝ *շարերգ* - շարերգություն, շարանվագ (երգերի՝ երաժշտության շարք), *տրտմերգ* – տխրերգ։ Հետևյալներն էլ նշված բառարանում ոչ թե հանդես են գալիս որպես առանձին գլխաբառեր, այլ տեղ են գտել բառահոդվածների բացատրությունների մեջ՝*հոտաղերգ* (գութաներգ, հորովել), *ողջուներգ* (բարևերգ), *վշտերգ* (ցավերգ)։

Ահա ևս մեկ բառ, որն արևմտահայ իրականության մեջ է գործածվել. *բներգ* «փխբ. բուն՝ հիմնական դեպք՝ իրադարձություն». «Հանճարեղ արուեստագէտը, որ այդքան խոր ապրած է խոցը, իր գործերուն մէջ միայն անուղղակի ակնարկներով հպանցիկ կ'անդրադառնայ համաճարակի *բներգին*» (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3,6)[21]։

Գ. Մխիթարյանի ատենախոսության մեջ ներկայացված մոտ մեկ տասնյակ համապատասխան բառերի շարքում է նաև *կանններգ*-ը, որը չի արձանագրվել վերոհիշյալ աղբյուրներից որևէ մեկում[22]։

Այսպիսով՝ ԱՀԲԲ-ում տեղ գտած 78 բառին պետք է հավելել հետևյալ 44-ը, որ և ընդհանուր ստացվում է 122 բառ. *առամանդ-երգ,*

---

[20] **Սուքիասյան Ա.**, *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, Ե., 2009 (այսուհետև՝ ՍՀԲ)։

[21] Տե՛ս *Նոր բառեր արևմտահայերէնի մէջ*. Բ գիրք, Ե., 2024։
https://language.sci.am/sites/default/files/nor_barher_arewmtahayereni_mej_b.pdf

[22] Տե՛ս **Մխիթարյան Գ.**, նշվ. աշխ., էջ 101։

ահերգ, աղավնաերգ, ավանդերգ, բներգ, գալա-համերգ, գարուներգ, գիներգ, եռերգ, թախծերգ, թռչներգ, խազերգ, ծղրիդաերգ, կալերգ, կանխերգ, կանոներգ, կաքավերգ, հակերգ, հաշվերգ, հավքաերգ, հիմնօրհներգ, հնչերգ, հոտաղերգ, հրաշաերգ, ձաղկերգ, մանրերգ, մեղվաերգ, շարերգ, ողջերգ, ողջուներգ, որսերգ, պարզերգ, պարսավերգ, պոպ-երգ, ջրաերգ, վերերգ, վշտերգ, վրեժերգ, տխրերգ, տոնահամերգ, տրտմերգ, փառերգ, փնջերգ, փոխերգ:

Ինչպես նկատելի է, նշված ցանկում ևս կան *համերգ* հիմքով կազմություններ՝ *գալա-համերգ*, *տոնահամերգ*, իսկ *վերերգ* բառն էլ միակն է, որ ոչ թե բառաբարդմամբ, այլ ածանցմամբ է կազմվել։

Այսպիսով՝ քննվող բոլոր միավորների մեջ առանձնանում են *համերգ* սերող հիմքով կազմված 5 օրինակները և նախածանցմամբ բաղադրված 3 բառերը։

Նաև հարկ է հաշվի առնել, որ ԱՀԲԲ-ից դուրս գրված բառացանկի *ջրերգ* բառն ունի «անասուններին ջրտուքի տանելու երգ» բացատրությունը, մինչդեռ այլ աղբյուրից քաղված *ջրաերգ* տարբերակն օժտված է բոլորովին այլ իմաստով՝ «1. ջրի խոխոջյուն, 2. ջրին նվիրված երգ» (ՍԷՆԲ)։

Առկա են նաև բազմաթիվ այսպիսի բաղադրություններ՝ ***ընծայերգ****ել*, ***ինքներգ****ություն*, ***լուսներգ****ություն*, ***ձայներգ****ել* և այլն (ԱՀԲԲ)։ Սրանց ելակետային հիմքերը (օրինակ՝ *ընծայերգ*, *ինքներգ*) թեև բառարաններում վկայված չեն, սակայն տեսականորեն կարող են ունենալ ինքնուրույն գործածություն և դիտարկվել որպես պոտենցիալ բառեր։

Հայերենում երգի մի շարք տեսակներ ավանդաբար անվանվում են բառակապակցական տերմիններով, ինչպես՝ *աշխատանքային երգ*, *աշուղական երգ*, *սանդի երգ*, *վիճակի երգ* և այլն։ Հնարավոր է նաև կազմել նշվածների համադրական բարդությամբ տարբերակնե-

րը, եթե, իհարկե, այդպիսիք արդեն իսկ կիրառական չեն երաժշտագիտության, գրականագիտության կամ հարակից այլ ոլորտներում: Օրինակ, հայերենում առկա է *գուսաներգ* բառը, ուստի կարելի է կազմել և կիրառել *աշուղերգ*-ը ևս, մանավանդ որ հիմա հայ իրականության մեջ շատ զարգացած է աշուղական արվեստը:

Խնդրո առարկա բառերը, բնականաբար, նաև հոմանշային շարքեր են կազմում: ՍՀԲ-ն բովանդակում է հետևյալը. *պարերգ - կաքավերգ – խաղերգ, քայլերգ – չվերգ, ռազմերգ – մարտերգ, աղոթերգ - օրհներգ, բարևերգ – ողջույներգ, գիշերերգ – ցայգերգ, գովերգ – ձոներգ, թաղերգ – ողբերգ, մահերգ – սգերգ - ողբերգ, ողբերգ – եղերերգ – սգերգ, ժամերգ – պաշտոներգ, ծաղրերգ – կատակերգ, ծիսերգ – ժամերգ, հեշտերգ – տարփերգ, տարփերգ –* 1. *սիրերգ*, 2. *հեշտերգ, տխրերգ – տրտմերգ, տոներգ – ցնծերգ, ցավերգ – վշտերգ, օրորերգ // օրրերգ - քներգ:* Ինչպես կարելի է նկատել, տրված շարքերի որոշ անդամներ կարող են հոմանշային շարք կազմել մյուսների հետ, ինչպես՝ *ողբերգ – եղերերգ – սգերգ – ցավերգ – վշտերգ* և այլն:

ՍՀԲ-ում *թվերգ* և *ասերգ* բառերից յուրաքանչյուրի կողքին տրված է *ռեչիտատիվ* (երաժշտական ձայնային ստեղծագործություն), այսինքն՝ *ասերգ* և *թվերգ* բառերը կողք կողքի տրված չեն որպես հոմանիշներ: Ըստ ԵԲԲ-ի՝ *թվերգ* «ռեչիտատիվ, խոսելանման եղանակ, վոկալ երաժշտության այն տեսակը, որն իր բնույթով նման է երգանման արտասանության, օգտագործվում է օրատորիաներում, կանտանտներում, ռոմանսներում, հատկապես օպերաներում (հոմանիշ է *ասերգ*)»: Այսպիսով, բառերի իմաստագործառական քննությունն ու դասակարգումները կարող են նպաստել նաև հոմանիշների նոր և լիակատար բառարանների կազմմանը:

Քննվող բառացանկի որոշ միավորներ միաժամանակ տարբեր բովանդակության ու տեսակի *երգեր* են նշանակում, ինչպես. *քարերգ* «1. քարերի վրա փորագրված երգ, 2. քարերին նվիրված երգ» (ԱՀԲԲ), *սրնգերգ* «1. սրինգի երգ՝ նվագ, սրինգով երգ, 2. երգ սրինգի մասին» (ԱՀԲԲ) և այլն։

Ինչպես վերը նշվել է, *երգ* բառը գործածելի է նաև «նվագ, մեղեդի, երաժշտություն» իմաստով։ Հետևաբար կարող է նաև որպես բառի վերջնաբաղադրիչ արտահայտել նշված իմաստը. ըստ ԱՀԲԲ-ի՝ *մահերգ* «1. մահվան՝ սգո երգ, որ երգում են թաղման հանդեսի ժամանակ, 2. այդպիսի երգի եղանակը, 3. երաժշտական ստեղծագործություն՝ սգի՝ ողբի բովանդակությամբ, 4. փխբ. խիստ տխուր՝ ողբագին երգ կամ երաժշտություն», *խմբերգ* «1. երգչախմբի կամ մի խումբ երգողների կողմից կատարվող երգ, 2. խմբանվագ», *զուգերգ* «1. երաժըշտական ստեղծագործություն երկու երգչի կամ երկու գործիքով նվագելու համար, 2. երկու անդամից (նվագողից կամ երգչից) բաղկացած խումբ (դուետ)» և այլն։

Երգ բաղադրիչը բառավերջում սովորաբար ունի գոյականական արժեք, սակայն, ըստ բառարանային տվյալների, բայական (*երգող*) արժեքով հատուկենտ կիրառություններ ևս առկայացել են, որոնք, կարելի է ասել, արդի լեզվափուլում մերժելի են. ըստ ԱՀԲԲ-ի՝ *քնարերգ*– 1. քնարերգություն, 2. քնարերգակ, *կատակերգ* – 1. կատակերգություն, 2. կատակերգակ, *սիրերգ* – 1 սիրո երգ, 2. ած. սեր երգող։

Հոմանշային զույգեր կամ շարքեր կազմող բառամիավորները կարող են տարբերվել հայերենի երկու ճյուղերից որևէ մեկին առավելապես պատկանելու տեսանկյունից։ Ստորև տրվող բառազույգերի առաջին անդամները բնորոշ են հատկապես արևմտահայերենին.

առանձներգ – մեներգ, զուարճերգ – ուրախերգ, յանկերգ (հանգերգ) **–** *կրկներգ* (ԳՃԲ, ՌՍԲ)։

Համանունություն ունեցող կամ բազմիմաստ որոշ արմատական բառեր, որոնք առանձին նույնպես գործածելի են «երգ» իմաստով, բաղադրվել են *երգ* վերջնաբաղադրիչով՝ կոնկրետացնելով տվյալ մասնակի իմաստը։ Այսպես.

Կանոն – ԱՀԲԲ-ում տրված բազում իմաստների մեջ նշված է նաև հետևյալը՝ «8. (եկեղ.) սրբին կա տոնին նվիրված եկեղեցական երգ, շարական» - ***կանոներգ***։ **Հիմն** - ԱՀԲԲ՝ «հանդիսավոր երգ, որ ընդունված է իբրև պետական, ազգային կամ դասակարգային միասնության խորհրդանիշ» - ***հիմներգ*** (ԱՀԲԲ՝ «հիմն հանդիսացող երգ, իբրև հիմն երգվող երգ»)։ **Սաղմոս** - ԱՀԲԲ՝ «1. (կրոն.) Աստվածաշնչի մի մասը՝ կրոնական քնարերգական հատվածների ու աղոթքների ժողովածուն, 2. (կրոն.) այդ ժողովածուի երգերից յուրաքանչյուրը կամ հատվածներից յուրաքանչյուրը, 3. փխբ. երգ, քնարերգական բանաստեղծություն, 4. փխբ. երգ, երաժշտություն, ...» - ***սաղմոսաերգ*** (ԱՀԲԲ՝ «տե՛ս սաղմոս (2)»)։ **Տաղ** - ԱՀԲԲ՝ «1. տաղաչափական գըրվածք, ոտանավոր, 2. երգ, 3. (հնց.) քերթված, գեղարվեստական ստեղծագործություն» – ***տաղերգ*** (ԱՀԲԲ՝ «1. երգ-երաժշտություն, երգվող տաղ, 2. քնարական գրվածք, 3. փխբ. երգ, դայլալյլ, ճռվողյուն») ևն։

2. *Երգ* վերջնաբաղադրիչով բառերի իմաստային դասակարգում

Խնդրո առարկա բառերը կարելի է դասակարգել հետևյալ իմաստային խմբերի.

1. Աշխատանքային երգ. *գութաներգ, կալերգ, հոտաղերգ, որսերգ, ջրերգ, սայլերգ։*

2. Բնության, ժամանակի և գյուղաշխարհի երգ. *այգերգ, աշներգ, գարուներգ, գիշերերգ, գյուղերգ, հովվերգ, հոտերգ, ջրաերգ, քարերգ, ցայգերգ։*

3. Գովաբանության, փառքի և օրհնության երգ. *գովերգ, կենացերգ, ձոներգ, փառերգ, հիմներգ, հիմնօրհներգ, ողջերգ, օրհներգ։*

4. Գրական-ժանրային և քնարական երգ. *ահերգ, ավանդերգ, գուսաներգ, թատերգ // թատրերգ // թատերերգ, հագներգ, սիրերգ, տաղերգ, քնարերգ* և այլն։

5. Եկեղեցական-ծիսական երգ. *աղոթերգ, ժամերգ, խորհրդերգ, ծիսերգ, կանոներգ, պաշտոներգ, սաղմոսաերգ, տաղերգ, օրհներգ։*

6. Երգի հատված, բաժին. *բներգ, կանխերգ, կրկներգ, հանգերգ, նախերգ, վերերգ, վերջերգ, տներգ։*

7. Երգ-երաժշտության կատարման ինչերանգ, ձև, ոճ. *ասերգ, դաշներգ, զանգերգ, թվերգ, խազերգ, համերգ, հաշվերգ, ինչերգ, մանրերգ, պոպ-երգ, սրնգերգ։*

8. Երգերի շարան, համակցություն. *եռերգ, շարերգ, փնջերգ, քառերգ։*

9. Երգի գեղագիտական հատկանիշներ և որակներ արտահայտող բառեր. արտահայտող բառեր. *աղամանդ-երգ, հրաշաերգ, պարզերգ։*

10. Երգողների կամ նվագողների թիվ, կազմ. *առանձներգ, դերերգ, երկերգ, եռերգ, զուգերգ, խմբերգ, հակերգ, մենահամերգ, մեներգ, փոխերգ, քառերգ։*

11. Թախծի, վշտի և սգո երգ. *եղերգ // եղերերգ, թախծերգ, թաղերգ, մահերգ, ողբերգ, վշտերգ, տխրերգ, տրտմերգ, ցավերգ։*

12. Ժողովրդական տոների, ծեսերի և հանդիսությունների երգ. *խորհրդերգ, հարսներգ, տոներգ։*

13. Ծաղր ու կատակի երգ. *ծաղրերգ, կատակերգ, հեգներգ, ձաղկերգ, պարսավերգ։*

14. Կենդանական աշխարհի, բնության ձայն. *աղավնաերգ, թռչներգ, հավքաերգ, ծղրիդաերգ մեղվաերգ, ջրաերգ.* <u>համերգ</u> հիմքով՝ *թռչնահամերգ, կատվահամերգ։*

15. Հերոսական-ռազմական, շարային և հանդիսավոր երգ. *բարներգ, կանչերգ, մարտերգ, ռազմերգ, հաղթերգ, ողջուներգ, քայլերգ, դյուցազներգ, վիպերգ, չվերգ, վրեժերգ.* <u>համերգ</u> սերող հիմքով՝ *գալա-համերգ, տոնահամերգ։*

16. Պարերգ. *խաղերգ, կաքավերգ, պարերգ։*

17. Ուրախության, վայելքի ու ցնծության երգ. *գիներգ, զվարճերգ, հեշտերգ տարփերգ, ցնծերգ, ուրախերգ։*

18. Օրորոցային երգ. *քներգ, օրորերգ // օրրերգ։*

Հարկ է նկատել, որ մի քանի բառեր միաժամանակ ներառվել են տարբեր խմբերում, քանի որ բազմիմաստ են և իրենց յուրաքանչյուր իմաստով առնչվում են դրանցից որևէ մեկին։

Մնացած բառերից շատերը ևս կարող են ընդգրկվել այլ խմբերում՝ ելնելով իմաստային հարակից հատկանիշներից։ Օրինակ՝ գրական ժանրերին վերաբերող խմբում կարելի է ներառել զգալի թվով այլ միավորներ ևս, քանի որ նույնպես գրական ստեղծագործության տեսակ են անվանում, սակայն իրենց հիմնական իմաստային հատկանիշով դասվել են այլ խմբերում։

Եզրակացություն

Հոդվածում օգտագործված մասնագիտական աղբյուրների տվյալների հիման վրա պարզվեց, որ գրավոր վկայություն ունի *երգ* վերջնաբաղադրիչով 122 բառ՝ չհաշված միևնույն բառի հնչատարբերակները։ Դրանցից միայն 78-ն է ամփոփված արդի հայերենի ամե-

նահարուստ բառարանում (ԱՀԲԲ), իսկ մնացած 44 բառամիավորները սփռված են այլ բառարաններում ու աղբյուրներում։

Բառացանկում առանձնանում են *համերգ* սերող հիմքով կազմված հինգ օրինակներ, որոնցում *երգ* արմատը, ի տարբերություն մնացած բոլոր բառերի, բառակազմությանը մասնակցում է միջնորդավորված։

Բացի նախածանցավոր երեք բառից (*համերգ*, *նախերգ*, *վերերգ*)՝ մնացած բոլոր օրինակները կազմված են բառաբարդմամբ։

Բառարաններում վկայված են այլ արմատներով և *երգ*-ով բաղադրված հիմքերով բազմաթիվ (հատկապես ածանցավոր) կազմություններ ևս, որոնց հիմքերը պոտենցիալ բառեր են և կարող են ստանալ ինքնուրույն գործածություն։

Դիտարկված բառակապակցական որոշ տերմիններ հնարավոր է փոխարինել քննվող բառախմբին համապատասխան համադրական բարդություններով։

Ուսումնասիրված բոլոր միավորները դասակարգվել են 18 իմաստային խմբերի։

Այսպիսով՝ *երգ* արմատը հայերենի բառակազմական ամենագործուն բաղադրիչներից է, որը լայնորեն կիրառվում է բազմաբովանդակ երգերի, գրվածքների ու հարակից երևույթների անվանման համար։

Նմանօրինակ հետազոտությունները կարող են նպաստել հայերենի բառապաշարի կառուցվածքային և իմաստաբանական օրինաչափությունների համակողմանի նկարագրությանը։

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1-2, Ե., 1976:

Աճառյան Հ., Հայերէն արմատական բառարան, հ. 1-4, Ե.,1971-1979:

Արևելահայերենի ազգային կորպուս

http://webcorpora.net/EANC/search/?interface_language=am

Գյուրջինյան Դ., Անուն խոսքի մասերի թվի կարգը հայերենում. քերականական բառարան-տեղեկատու, Ե., 2007:

Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., 2002:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, Ե., 1969-1980:

Ճէրէճեան Արք. Գ., Տօնիկեան Փ. և Տէր Խաչատուրեան Ա., Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, 1992:

Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, հ. 1-4, Ե., 1944-1945:

Մելիք-Վրթանեսյան Կ., **Տոնյան Մ.**, Երաժշտական բացատրական բառարան, Ե., 1989:

Մեյթիխանյան Փ., Հայերենի ուղղագրական նոր բառարան, Ե., 2013:

Մեյթիխանյան Փ., Նոր բառերի բացատրական բառարան, Ե., 1996:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1-2, Վենետիկ, 1836-37:

Նոր բառեր արևմտահայերէնի մէջ. Բ գիրք, Ե., 2024:

https://language.sci.am/sites/default/files/nor_barher_arewmtahayereni_mej_b.pdf

Մխիթարյան Գ., Հայերենի երաժշտական տերմինները 19-20-րդ դարերում (ատենախոսություն), Ե., 2000:

Նոր բառեր, Ա - Թ պրակներ, ԳԱԱ ԼԻ, Ե., 2015-2025:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի հանգաբառարան, Ե., 1976:

Սաքապետոյան Ռ., Արևմտահայերէն-արևելահայերէն նոր բառարան, Ե., 2011։
Սուքիասյան Ա., **Սուքիասյան Ք.**, Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Ե., 2002։
Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Ե., 2009։

Khachatryan Valentin - Semantic-Functional Analysis of Armenian Formations with the Final Component «երգ» (song). - The article conducts a semantic-functional analysis of Armenian words featuring the final component «երգ». First, based on the study of several dictionaries and professional sources, 122 corresponding lexical units were identified. Attention was also paid to the lexicographical evidence of other formations derived from these word stems, noting that these stems could theoretically also function as independent lexical units. The paper also addresses phraseological and phrasal terms that can be replaced by compound words containing the final component «երգ». It is concluded that these constitute potential words, which testifies to the high vitality of the root «երգ». Furthermore, the issue of polysemy of the words in question is examined, highlighting the capacity of certain lexical units to simultaneously denote various types of songs or literary works. Units exhibiting synonymous relations were identified. It was observed that even the most comprehensive dictionary of synonyms does not include all synonyms, and certain omissions and errors exist. Additionally, it was established that some units are specific to or primarily characteristic of one of the two branches of literary Armenian - either Eastern Armenian or Western Armenian. Ultimately, all units are classified into 18 semantic groups, such as: 1. labor songs, 2. songs of praise, glory, and blessing, 3. ecclesiastical-ritual songs, etc.

Keywords: song, final component, composition, stem, semantic-functional features, word sense, dictionary, lexical unit.

Khachatryan Valentin, PhD in Philology, Associate Professor, Institute of Language after H. Acharian, Senior Researcher.

Хачатрян Валентин - Семантико-функциональный анализ армянских образований с конечным компонентом «երգ» (песня). - В статье подвергаются семантико-функциональному анализу армянские слова с конечным компонентом «երգ». Прежде всего, на основе исследования ряда словарей и профессиональных источников были выявлены 122 соответствующие лексические единицы. Внимание было уделено также словарным фиксациям других образований**,** возникших на базе данных основ, и отмечено, что эти основы теоретически также могут функционировать в качестве самостоятельных лексем. В работе рассмотрены и те словосочетательные термины, которые могут быть заменены сложными соединительными словами с финальным компонентом «երգ». Сделан вывод, что они представляют собой потенциальные слова, свидетельствующие о высокой жизнеспособности корня «երգ». Далее исследуется вопрос многозначности целевой лексики, отмечается способность ряда лексических единиц одновременно обозначать различные виды песен или литературных произведений. Были выделены единицы, находящиеся в синонимических отношениях. Зафиксировано, что даже в самом богатом словаре синонимов представлены не все синонимы, а также имеются определенные пропуски и упущения. Кроме того, установлено, что некоторые единицы специфичны или наиболее характерны для одной из двух ветвей литературного армянского языка — восточноармянского или западноармянского. В итоге все единицы классифицированы по 18 семантических групп, таких как: 1. трудовые песни, 2. песни прославления, славы и благословения, 3. церковно-обрядовые песни и др.

Ключевые слова: песня, конечный компонент, состав, основа, семантико-функциональное особенности, значение слова, словарь, лексическая единица.

Хачатрян Валентин, кандидат филологических наук, доцент, Институт языка им. Р. Ачаряна, старший научный сотрудник.